ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-184³-20.12.2012-ԳԲ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 90.1 -րդ հոդվածով՝.

«Հոդված 90.1 Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության կանոնները խախտելը:

Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմներն ապօրինաբար ստանալը, փորձարկելը, բազմացնելը, պահելը, ոչնչացնելը կամ վնասազերծելը, ինչպես նաեւ ներմուծելը, արտահանելը եւ անդրսահմանային տեղափոխությունը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեսունհինգհազարապատիկից մինչեւ քառասունհազարապատիկի չափով, պաշտոնատար անձանց նկատմամբ՝ հիսունհինգհազարապպատիկից մինչեւ վաթսունհազարապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
<<ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

հ/հ	**Առարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը**	**Առարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունը**
	1.	2.	3.	4.
1.	ՀՀ արդարադատության նախարարություն 05.11.2013թ. N 01/6542-13	1. Օրենքի նախագծում անհրաժեշտ բոլոր հարցերը կարգավորված չեն: Այսպես՝ նախագծի 21-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսվում է իրավաբանական անձանց կողմից գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների կենսաանվտանգության ռիսկերի գնահատման արդյունքների մասին հասարակական լսումների միջոցով հանրությանը տեղեկացնելու վերաբերյալ դրույթներ, մինչդեռ պարզ չէ, թե իրավաբանական անձանց կողմից հիշյալ տեղեկությունները չտրամադրելու դեպքում ինչ իրավական հետևանքներ կարող են առաջանալ: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նկատի ունենալ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, որոնց համաձայն նորմատիվ իրավական ակտերում չպետք է կիրառվեն նորմեր, որոնց չկատարման համար իրավական հետևանքներ նախատեսված չեն:	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն:

		2.«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ. Օրենսդրական տեխնիկայի կանոնները մասամբ պահպանված չեն: Այսպես՝ նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված է լրացում կատարել և հոդվածը լրացնել նոր՝ 44-րդ կետով, մինչդեռ հոդվածում արդեն իսկ ներառված է 44-րդ կետը:	Ընդունվել է:	2-րդ հոդվածի 44-րդ կետում բազային տուքը սահմանված է տասնհինգհազարապատիկի չափով:
2.	ՀՀ էկոնամիկայի նախարարություն նախարարի տեղակալ Արա Պետրոսյան Նախարարի առաջին տեղակալ Կարինե Մինասյան	1.Նախագծերի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծերով կարգավորվող շրջանակները առնչվում են գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների շուկայի հետ: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն: 1 Առարկություններ չկան:	Չի ընդունվել :	Օրենքի նախագիծը վերաբերվում է ԳՁՕ գործածությանը մեկուսացված համակարգերում:

3.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Առարկություններ չկան:		
4.	ՀՀ առողջապահության նախարարություն	Առարկություններ չկան:		
5.	ՀՀ ֆինանսների նախարարություն	Առարկություններ չկան:		
6.	ՀՀ բնապահպանության նախարարություն	Առարկություններ չկան:		

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

<<ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

հ/հ	**Առարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը**	**Առարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունը**
	1.	2.	3.	4.
1.	ՀՀ Ազգային ժողով <<Օրինաց երկիր>> պատգամավորական խմբակցություն 09.10.2013թ. N 02/10.5/15168-13	Նախագծի 6-րդ հոդվածի 7-րդ ենթակետում <<հանդիսանում է>> բառից հետո լրացնել <<գենետիկական անվտանգության գոտի և>> բառերը	Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան ուղղումը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
<<ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍՏԱՑՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/h	**Առարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը**	**Առարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունը**
	1.	2.	3.	4.
	ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ ՎԱՀԱԳՆ ՄԱԽՍՈՒԴՅԱՆ (106) ԼՅՈՎԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ (012) ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ (108) 07.11.2013թ.	1.Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետի <<կարող է>> բառը հանել:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		2. 7-րդ հոդվածի 2-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների օգտագործում» հասկացությունը փոխարինել «գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածություն» հասկացությամբ, նկատի ունենալով, որ Նախագծի «Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները» վերտառությամբ 2-րդ հոդվածով տրված է «գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածություն» հասկացության սահմանումը:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ
		3. Նախագծի 7-րդ հոդվածի 5-րդ մասով առաջարկվում է, որ Հայաստանի Հանրապետությունում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության կենսաանվտանգության ռիսկի գնահատման կարգը և մեթոդական ուղեցույցը	Ընդունվել է	Նախատեսված է Հայաստանի Հանրապետությունում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության կենսանվտանգության ռիսկի գնահատման կարգը և մեթոդական ուղեցույցը, ինչպես նաև լիցենզիայի գործողության կասեցնելու, դադարեցնելու կարգը ընդունել 18 ամիս

		հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, այնուամենայնիվ, Նախագծին կից հիմնավորման մասին տեղեկանքում նշված չէ ՀՀ կառավարության որոշման կամ իրավական այլ ակտի ընդունման նախատեսվող կոնկրետ ժամկետը: 4. Նախագծի 10-րդ հոդվածի 2-րդ կետի <<Հայաստանի Հանրապետության>> բառերը հանել: 5. Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «լիազորված պետական մարմիններին», 13-րդ հոդվածի 4-րդ մասի «լիազորված մարմնին», 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «պետական լիազոր մարմնին», 2-րդ մասի «լիազորված պետական մարմնին», 22-րդ հոդվածի «Հայաստանի Հանրապետության պետական լիազորված մարմինները» բառերն համապատասխան հոլովով փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը» բառերով: 6. Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասում եզակի թվով օգտագործված «Գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմի գործածության» հասկացությունը փոխարինել հոգնակի թվով՝ «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության»	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	հետո Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել են համապատասխան փոփոխություններ Կատարվել է համապատասխան փոփոխություն

		հասկացությամբ: 7. Նախագծի 14-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «13-րդ հոդվածով սահմանված հայտի պահանջները» բառերը փոխարինել «13-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հայտում պահանջվող տեղեկությունները» բառերով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		8. Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մասի «գաղտնի համարվող» և Նախագծի 20-րդ հոդվածի 2-րդ մասի «գաղտնիք հանդիսացող» բառերը փոխարինել «գաղտնիք կազմող» բառերով:	Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ
		9. Նախագծի 23-րդ հոդվածի 5-րդ մասից հանել <<կարող են>> բառերը:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		10. Նախագծի 24-րդ հոդվածի «օրենքով պահպանվող» բառերը փոխարինել «օրենքով սահմանված գաղտնիք կազմող» բառերով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.		
		1. Նախագծի 1-ին հոդվածի «1 տասհազարապատիկի չափով» բառերը փոխարինել «10000-ապատիկի	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		չափով» բառերով՝ ապահովելով Օրենքի և Նախագծի շարադրանքի համապատասխանությունը: 2. Նախագծի 2-րդ հոդվածին՝ «տասնհինգհազարապատիկ չափով» բառերը փոխարինել «15000-ապատիկի չափով» բառերով: 3. . Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվել է Օրենքի 20-րդ հոդվածը լրացնել նոր 44-րդ կետով, մինչդեռ Օրենքի 20-րդ հոդվածում արդեն իսկ ամրագրված է ***44-րդ կետ*** : Ուստի անհրաժեշտ է առաջարկվող լրացման կետի համարակալումը փոխել 49-ի:	Ընդունվել է Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան փոփոխություն
1.	ՄԱՐՏՈՒՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ (034)	1. Նախագծի 2-րդ հոդվածում սահմանել նոր հասկացություններ. <<ռիսկ>>, <<ազատ գոտի>>, <<գործընթաց>>: 2. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի <<ձևերի>> բառից հետո լրացնել <<ներառյալ դրանց հետ կապված արտահանումը, ներմուծումը և տարանցիկ փոխադրումը>> բառերը: 3. Նախագծի 5-րդ հոդվածի 1-ին մասի «կարգավորվում են» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ» բառերը: 4. Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ և 4-րդ	Չի ընդունվել Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	2-րդ հոդվածում սահմանված են ռիսկի գնահատում և կառավարում, ինչպես նաև գենետիկական անվտանգության գոտի հասկացությունները Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան փոփոխություն

		կետերը խմբագրել, նկատի ունենալով, որ հոդվածը վերաբերում է կենսաանվտանգության ապահովման հիմնական սկզբունքներին, սակայն հոդվածը միաժամանակ պարունակում է պարտադրող նորմեր: 5. Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրել նախագծի 13-րդ հոդվածում: 6. Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «լիազոր պետական մարմնի (մարմինների) ճանաչումը» բառերը փոխարինել «լիազոր պետական կառավարման մարմնի (մարմինների) ճանաչումը» բառերով: 7. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասը «պետական» բառից հետո լրացնել «կառավարման» բառով: 8. Նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում ամրագրված «ՀՀ կառավարության կողմից սահմանված մեկուսացված համակարգին ներկայացվող տեխնիկական և մեթոդական պահաջները համարվում են լիցենզավորման պարտադիր պահանջ:» նախադասությունը իրավասություն չէ, այն ամրագրել նախագծի 13-րդ հոդվածում:	Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան փոփոխություն Կատարվել է համապատասխան փոփոխություն

		9. Նախագծի 9-րդ հոդվածի 2-րդ մասը հանել:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		10. Նախագծի 11-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի <<Եթե համայնքը հայտարարում է գենետիկական անվտանգության գոտի ապա դա հանդիսանում է մերժման հիմք>>, նախ <<հանդիսանում է>> բառից հետո լրացնել <<հայտի>> բառը և նշված նախադասությունը ամրագրել հոդված 16-ում:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		11. Նախագծի հոդված 12-ի կետ 1-ում սահմանվում է՝ «Փորձագիտական խումբը բաղկացած է կենսանվտանգության ոլորտի համապատասխան մասնագետներից, որոնց կազմը ստեղծվում և համալրվում է ոլորտի լիազորված պետական կառավարման մարմնի կողմից»: Հարկավոր է հստակեցնել համապատասխան մասնագետները:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		12. Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ մասի «փորձագիտական խմբերի», 7-րդ մասի «Փորձագիտական խմբերի» և «փորձագիտական եզրակացությունների» բառերը փոխարինել «փորձագիտական խմբի», «Փորձագիտական խմբի» և «փորձագիտական եզրակացության»	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		բառերով: 13. Նախագծի 13-րդ հոդվածի 2-րդ կետում լրացնել նոր ենթակետ հետևյալ խմբագրությամբ. <<իրավաբանական անձի լրիվ անվանումը>>:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		14. Սահմանադրության 83.5.-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում իրավաբանական անձինք ստեղծելու, դրանց գործունեությունը կասեցնելու կամ դադարեցնելու կարգը և պայմանները, մինչդեռ Նախագծի 13-րդ հոդվածով սահմանվում է, որ մի դեպքում լիազոր մարմինը իրավունք ունի դադարեցնել տվյալ գործունեությունը և մի դեպքում էլ լիազոր մարմինը պարտավոր է դադարեցնել տվյալ գործունեությունը (Նախագծի 13-րդ հոդվածի 6-րդ և 10-րդ մասերը), իսկ նույն հոդվածի 8-րդ մասով սահմանվում է, որ «Եթե, սույն հոդվածի 4-րդ և 7-րդ մասով սահմանված ռիսկի փոփոխությունները կարող են անբարենպաստ ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի եւ կենսաբազմազանության վրա՝ հաշվի առնելով մարդու կյանքին և առողջությանը սպառնացող վտանգը, լիազորված մարմինը պարտավոր է	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		պահանջել մեկուսացված համակարգում օգտագործման պայմանների փոփոխություն, որը չապահովելու դեպքում՝ պարտավոր է անմիջապես ***սույն օրենքի համաձայն կասեցնել լիցենզիայի գործողությունը:»,*** սակայն, Նախագծով սահմանված չեն լիցենզիայի կասեցման հիմքերը: Այս կապակցությամբ անհրաժեշտ է Նախագծում հստակ սահմանել իրավաբանական անձանց գործունեությունը կասեցնելու, դադարեցնելու կարգը և պայմանները: 15. Նախագծի 19-րդ հոդվածի 2-րդ մասում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով» բառերը փոխարինել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով» բառերով:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն
		16. Նախագծի 21-րդ հոդվածի վերնագիրը համապատասխանեցնել հոդվածի տեքստին, քանի որ նշված հոդվածով սահմանված են միայն գենետիկորեն ձեւափոխված օրգանիզմների գործածությամբ զբաղվող անձանց պարտականությունները, մինչդեռ Նախագծի 7-րդ գլուխը և միակ 21-րդ հոդվածը վերնագրված	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն

		են «ԳԵՆԵՏԻԿՈՐԵՆ ՁԵՎԱՓՈԽՎԱԾ ՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»: Սահմանել նաև իրավունքները: 17. Նախագծի 25-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 25. Պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու դեպքում Սույն օրենքի պահանջների խախտումը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:»:	Ընդունվել է	Կատարվել է համապատասխան փոփոխություն